ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1958 Общественные науки

Ա. Թելուցց

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ

Իր ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում մարքսիզմը զարգացել ու պատմական հաղթանակներ է ձեռք բերել, հետևողականորեն պայքար մղելով իր բացարձակ ու քողարկված թշնամիների դեմ։ Նրա թշնամիների թվին է պատկանում ռևիզիոնիզմը, որը ժամանակակից պայմաններում գլխավոր վտանգ է հանդիսանում միջազգային բանվորական շարժման մեջ։ Սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների 1957 թ. նոյեմբերյան խորհրդակցության Դեկլարացիայում ասված է. «Դատապարտելով դոգմատիզմը, կոմունիստական պարտիաները ժամանակակից պայմաններում գլխավոր վտանգը համարում են ռևիզիոնիզմը, այլ կերպ ասած՝ աջ օպորտունիզմը՝ որպես բուրժուական գաղափարախոսության դրսևորում, որը ջլատում է բանվոր դասակարգի ռևոլյուցիոն եռանդը, պահանջում է պահպանել կամ վերականգնել կապիտալիզմը»։

Ռևիզիոնիզմը նոր երևույթ չէ միջազգային բանվորական շարժման մեջ։ Այն սկսվեց լայնորեն տարածվել XIX դարի վերջերից, երբ մարքսիզմն արդեն լիակատար հաղթանակ էր տարել միջազգային բանվորական շարժման մեջ։ «Պատմության դիալեկտիկան այնպես է, որ մարքսիզմի թեորիական հաղթանակը ստիպում է նրա թշնամիներին մարքսիստի զգեստ հագնել»[1]*,— գրել է Վ. Ի. Լենինը։*

Ռևիզիոնիզմի երևան գալը կապված էր այն պատմական ժամանակաշրջանի հետ, երբ Արևմուտքում բուրժուական ռևոլյուցիաները ավարտվել էին և կապիտալիզմը իր համեմատաբար «խաղաղ» զարգացումն էր ապրում, իսկ Արևելքը դեռ չէր հասունացել այդ ռևոլյուցիաների համար։ Կապիտալիզմի «խաղաղ» զարգացումը, բուրժուական պառլամենտարիզմի ծաղկումը մանրբուրժուական խավերի և պրոլետարիատի որոշ մասի մեջ պատրանք էին ստեղծում կապիտալիզմի կայունացման, նրա դեմոկրատական զարգացման և էվոլյուցիոն ճանապարհով կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու մասին։ Պատմական այդ ժամանակաշրջանը, որն իրականում ռևոլյուցիոն մարտերի նախապատրաստման ժամանակաշրջան էր, օպորտունիզմը գնահատում էր որպես սոցիալական խաղաղության էրայի հաստատում, որը բացառում է պրոլետարական ռևոլյուցիայի ու պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը։ Օպորտունիստները մարքսիզմի քողի տակ սկսում են նրա արմատական դրույթների ռևիզիան։ Թողնելով մարքսիզմից միայն նրա անունը, նրանք ոչնչացնում էին նրա կենդանի, ռևոլյուցիոն ոգին, վերանայում մարքսիստական ուսմունքը պրոլետարական ռևոլյուցիայի ու պրոլետարիատի դիկտատուրայի մասին։ Ռևիզիոնիզմի մունետիկներից մեկը՝ Է. Բեռնշտայնը

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 18, էջ 738։

ազդարարեց ռևիզիոնիզմի հռչակած հանգանակը՝ «նպատակը ոչինչ է, շարժումն ամեն ինչ»։ Դա սոցիալիզմի գաղափարի և պրակտիկայի ոտնահարումն էր հանուն կապիտալիստական սիստեմի այն առանձին կարծեցյալ կամ իրական բարեփոխությունների, որոնք ամենևին էլ չեն դիպչում այդ սիստեմի բուն հիմքերին։ Ռևիզիոնիզմը բուրժուական իդեոլոգիայի ազդեցության դրսևորումն էր բանվորական շարժման մեջ, նրա նպատակն էր այդ շարժումը դնել բուրժուազիայի համար հանդուրժելի շրջանակների մեջ, հավերժացնել կապիտալի տիրապետությունը բանվոր դասակարգի և ողջ աշխատավոր ժողովրդի վրա։

Ռևիզիոնիզմը, լայն տարածում ստանալով և հաղթանակի հասնելով եվրոպական սոցիալ-դեմոկրատական պարտիաներում, հանդեց իր տրամաբանական վախճանին՝ բանվոր դասակարգի բացարձակ դավաճանությանը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Երկրորդ Ինտերնացիոնալի՝ խոսքով սոցիալիստ, գործով շովինիստ պարագլուխները սվիններով դիմավորեցին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և առաջին սոցիալիստական պետության ստեղծումը մեր երկրում։ Ռևիզիոնիզմի հաղթանակը սոցիալիստական պարտիաների մեջ կանխորոշեց նրանց վերասերումը բուրժուական պարտիաների։ Բազմիցս անցնելով իշխանության ղլուխ, այդ պարտիաները արդարացրին իմպերիալիստական բուրժուազիայի սպասելիքները։

Սոցիալ-դեմոկրատական պարտիաների վերասերումը, ռևիզիոնիզմի թեորիայի ու պրակտիկայի հաղթանակը II Ինտերնացիոնալի պարտիաների մեջ մեծապես վնասեցին միջազգային բանվորական շարժմանը։ Պատմական մեծագույն իրադարձությունների ժամանակ բանվորների և ամբողջ աշխատավոր ժողովրդի մի զգալի մասը, հավատ տածելով այդ պարտիաներին, չէր կարող կողմնորոշվել քաղաքական բարդ իրադրության մեջ և մոբիլիզացնել ուժերը կապիտալիստական կարգերը խորտակելու համար։ Սակայն ռևիզիոնիզմի թեորիան ու պրակտիկան կամ որևէ մի այլ ռեակցիոն ուժ անկոր է կանխելու պատմության պրոգրեսիվ զարգացումը։ Մեծ Լենինի ստեղծած Կոմունիստական պարտիան, ջախջախելով թշնամական ամեն մի սողոսկում բանվորական շարժման մեջ, այդ թվում և ռևիզիոնիզմը, բարձրացրեց ստեղծագործական մարքսիզմի անպարտելի դրոշը, ղեկավարեց բանվոր դասակարգի ազատագրական պայքարը, սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիզմի հաղթանակը ՍՍՌՄ-ում։ Կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգն ստեղծեց իր մարքս-լենինյան պարտիաները, որոնք կոփվելով դաժան պայքարում, դարձել են ժողովուրդների ազատագրական շարժման առաջամարտիկները։ Պատմական նոր ժամանակաշրջանում, երբ նեխվող կապիտալիստական աշխարհի կողքին ծագել ու հաղթականորեն զարգանում է սոցիալիզմի համաշխարհային լագերը, իսկ կապիտալիստական երկրներում կոմունիստական պարտիաները դարձել ու դառնում են բանվորական շարժման ճանաչված ղեկավարը, ռևիզիոնիզմը փոխում է իր գործելակերպը, հանդես գալիս պայքարի նոր պրիոմներով, ջանում թափանցել կոմունիստական շարժման մեջ և քայքայել այն ներսից։ Ռևիզիոնիզմն աշխուժանում է հատկապես պատմական խոշոր իրադարձությունների ու բեկման պայմաններում։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում, առանձնապես վերջին տարիներին նկատվում է ռևիզիոնիզմի նոր աշխուժացում, որը կոմունիստական և բանվորական պարտիաների առջև դնում է անհետաձգելի խնդիր՝ մեր-

կացնել նրա հակամարքսիստական էությունը և ջախջախիչ հակահարված տալ նրա ամեն տեսակի դրսևորումներին։

Ժամանակակից ռևիզիոնիզմի սոցիալական բազան բանվորական արիստոկրատիան է, որը սնուցել էր օպորտունիզմն ու ռևիզիոնիզմն անցյալում։ Իմպերիալիստական բուրժուազիան, որը գերշահույթ է ստանում թե սեփական երկրների աշխատավոր ժողովրդի շահագործումից և թե գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների կեղեքումից, որոշ փշրանքներ է հատկացնում բանվորական վերնախավին, արհեստակցական և այլ կազմակերպությունների այն ղեկավարներին, որոնք դադարել են ծառայելուց բանվոր դասակարգի շահերին, և նրանց միջոցով ներգործում է բանվոր դասակարգի վրա։ Այդ խավը, որը փաստորեն կտրել է իր կապը պրոլետարական լայն զանգվածների հետ, դարձել է բուրժուական իդեոլոգիայի կրողն ու տարածողը բանվորների շրջանում։ Ռևիզիոնիզմի համար անցյալում և ժամանակակից պայմաններում սոցիալական բազան է հանդիսանում նաև բանվորական այն խավը, որը կազմավորվում է ոչ պրոլետարական խավերի քայքայումից։ Բանվոր դասակարգը մեկուսացած չէ բուրժուական հասարակության մնացած դասակարգերից։ Ռեակցիոն ուժերը կապիտալիստական երկրներում զինված են հզոր ներգործության հզոր միջոցներով, ինչպես օրինակ, բուրժուական մամուլն ու ռադիոն, քաղաքական ու այլ կազմակերպությունները, եկեղեցին, ռեակցիոն արվեստն ու գրականությունը։ Սրանք օգտագործվում են աշխատավորներին քաղաքական պայքարից հետ պահելու և նրանց գիտակցությունը թունավորելու համար։ Ռևիզիոնիզմի համար պայմաններ են ստեղծում նաև բուրժուական պետությունների կողմից կիրառվող ռեպրեսիաները. բանվոր դասակարգի ու նրա կազմակերպությունների մեջ տեղ գտած անկայուն տարրերը չեն դիմանում այդ ռեպրեսիաներին և ռևոլյուցիոն պայքարի հանդեպ նախապատվություն են տալիս իրենց համաձայնողական վարքագծին։ Բուրժուական իդեոլոգիան իր ազդեցությունն է ունենում նաև սոցիալիստական երկրների անկայուն տարրերի վրա։ Սոցիալիստական շինարարության դժվարությունները, դասակարգային պայքարի սրումը ժողովրդա-դեմոկրատական երկրներում, շահագործող դասակարգերի մնացորդների կատաղի դիմադրությունը սոցիալիստական վերափոխումներին, իմպերիալիստական պետությունների քայքայիչ գործունեությունը և այլն իրենց արտահայտությունն են գտնում ռևիզիոնիստական սողոսկումների մեջ։ Հարավսլավիայի Կոմունիստների միության ղեկավար խումբը, խրվելով ռևիզիոնիզմի ճահիճը և հրաժարվելով ռևոլյուցիոն մարքսիզմից, բացարձակապես հանդես եկավ միջազգային կոմունիստական շարժման սկզբունքների դեմ։ Ժամանակակից ռևիզիոնիզմն, այսպիսով, ունի իր ներքին և արտաքին աղբյուրը։ «Բուրժուական ազդեցության առկայությունը ռևիզիոնիզմի ներքին աղբյուրն է, իսկ իմպերիալիզմի գործադրած ճնշման հանդեպ կապիտուլյանտությունը՝ նրա արտաքին աղբյուրը»,— ասված է սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների Դեկլարացիայում։

Նախկինում ռևիզիոնիզմը գործում էր պատմական այն դարաշրջանում, երբ կապիտալիզմն դեռևս միակ համաշխարհային սիստեմն էր։ Սոցիալիզմի ուսմունքը մինչև 1917 թ. դեռևս իր մարմնացումը չէր գտել սոցիալիստական սիստեմի մեջ։ Ռևիզիոնիզմը, բնականաբար, այդ ժամանակ վերանայում էր սոցիալիզմի թեորիան, իսկ պրակտիկայում նա ճգնում էր բանվորական

շարժումը հարմարեցնել բուրժուազիայի շահերին։ Ռևիզիոնիզմի նպատակը կապիտալիստական կարգերի պահպանումն էր՝ խաղաղ ճանապարհով կապիտալիզմը սոցիալիզմի մեջ վերաճելու քողի տակ։ Պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակը և սոցիալիստական կարգերի հաստատումը ՍՍՌՄ-ում, իսկ այնուհետև սոցիալիզմի համաշխարհային լագերի գոյացումը ռևիզիոնիզմի առաջ խնդիր դրեց ոչ միայն պահպանել կապիտալիզմը մնացած երկրներում, այլև վերականգնել այն սոցիալիստական երկրներում։ Գիտական սոցիալիզմի թեորիայի քննադատությունը զուգակցվեց սոցիալիզմի պրակտիկայի, սոցիալիստական շինարարության փորձի, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի «քննադատության» հետ, քննադատություն, որի ատաղձը կազմում է պատմական փաստերի ու դեպքերի այլանդակ աղավաղումն ու աղճատումը, իսկ փաստարկման եղանակը՝ բուրժուական իդեոլոգիայի գինանոցից վերցրած բամբասանքներն ու զրպարտությունները պրոլետարիատի դիկտատուրայի, սոցիալիստական պետության ու սոցիալիստական կարգերի հասցեին։

Իմպերիալիստական բուրժուազիան ժամանակակից պայմաններում չի կարող բավարարվել այն բանով, որ աջ սոցիալ-դեմոկրատական պարտիաները դարձել են սովորական բուրժուական պարտիաներ, սոցիալիզմից ժառանգելով միայն նրա անունը։ Նրան ահաբեկում է կոմունիստական շարժման վիթխարի աճը ամբողջ աշխարհում, կոմունիստական ու բանվորական պարտիաների աճը, նրանց ազդեցության ու հեղինակության ուժեղացումը հատկապես հետպատերազմյան տարիներին։ Կոմունիստական պարտիաների դեմ նա գործի է դնում հալածանքի բոլոր միջոցները, որի հետևանքով ավելի քան 30 երկրներում այդ պարտիաներն ստիպված են եղել անցնելու ընդհատակյա աշխատանքի։ Բայց բուրժուազիան լաջ գիտի, որ կոմունիստական պարտիաների դեմ բավական չէ պայքարել միայն բռնության միջոցներով։ Նա դիմում է նաև այն մեթոդին, որն իր արդյունքներն է տվել անցյալում սոցիալիստական պարտիաների դեմ մղվող պայքարում, այսինքն աջակցում, խրախուսում ու ոգեշնչում է այն տարրերին, որոնց գործունեությունը ուղղված է ռևոլյուցիոն պարտիաների դեմ, բուն այդ պարտիաների ներսում։ Նա ձգտում է ունենալ «կոմունիստական» անուն կրող համաձայնողական կազմակերպություններ, ինչպես ունի «սոցիալիստական» անունը կրող բուրժուական պարտիաներ։ Ժամանակակից ռևիզիոնիզմը բուրժուական ազդեցության թափանցումն է կոմունիստական շարժման մեջ։ Նրա նպատակն է ներսից պայթեցնել կոմունիստական պարտիաները կապիտալիստական ու սոցիալիստական երկրներում, քայքայել կոմունիստական պարտիաների իդեոլոգիական, կազմակերպչական ու տակտիկական սկզբունքները, հեղինակազրկել ու արատավորել կոմունիստական շարժումը։

Մեր ժամանակաշրջանի հիմնական բովանդակությունը անցումն է կապիտալիզմից սոցիալիզմին։ Սոցիալիզմը դուրս է եկել մի երկրի սահմաններից և դարձել համաշխարհային սիստեմ, իր ոլորտի մեջ առնելով երկրագնդի տերիտորիայի մեկ քառորդը և բնակչության ավելի քան մեկ երրորդը։ Իմպերիալիստական բուրժուազիայի կատաղի պայքարը սոցիալիստական սիստեմի դեմ ոչ միայն չի ավարտվել այդ սիստեմի պարտությամբ, այլ, ընդհակառակը, վերջինս ամեն մի փորձությունից դուրս է գալիս ավելի ամրապնդված ու հզոր։ Պատմության գիրկն են անցել այն ժամանակները, երբ սոցիալիստական միակ

երկիրը գտնվում էր կապիտալիստական շրջապատման մեջ։ Բայց իմպերիալիստական բուրժուազիան չի հրաժարվում իր փայփայած հույսից՝ ոչնչացնելու սոցիալիստական սիստեմն ամբողջ աշխարհում։ Այդ ցնորամիտ հույսի իրականացման համար նա լայնորեն օգտագործում է ռևիզիոնիզմը։ Ժամանակակից ռևիզիոնիզմի առանձնահատկություններից մեկը հենց այն է, որ նա հանդիսանում է բուրժուական քաղաքականության ու իդեոլոգիայի զենքը սոցիալիզմի համաշխարհային սիստեմի դեմ մղվող պայքարում։ Նա իր քայքայիչ աշխատանքն է կատարում ոչ միայն բանվորական շարժման մեջ՝ կապիտալիստական երկրներում, այլև փորձում է սողոսկել սոցիալիստական երկրները, այդ երկրների կոմունիստական պարտիաների շարքերը։

Ժամանակակից ռևիզիոնիզմը կապված է հետպատերազմյան ժամանակաշրջանի տնտեսական ու քաղաքական իրադրության հետ։ Պատերազմից հետո մի շարք կապիտալիստական երկրներում նկատվում էր համեմատաբար բարձր տնտեսական կոնյունկտուրա, որը բացատրվում էր այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են ռազմական արդյունաբերության միակողմանի ուռչելը իմպերիալիստական երկրներում, հիմնական կապիտալի վերանորոգումը, մի շարք երկրների, հատկապես ԱՄՆ-ի նպաստավոր դիրքերը կապիտալիստական համաշխարհային շուկայում։ Համեմատաբար բարձր տնտեսական կոնյունկտուրայի առկայությունը մանրբուրժուական խավերի և բանվոր դասակարգի մի մասի մեջ ծնում է պատրանք կապիտալիզմի կայունության մասին։ Ռևիզիոնիզմն իր իդեոլոգիան ու քաղաքականությունը միշտ էլ կառուցել է պատրանքների ու անցողակի երևույթների վրա։ Վ. Ի. Լենինը այսպես է բնորոշել այդ քաղաքականությունը. «Դեպքից դեպք որոշել իր վարքագիծը, հարմարվել օրվա անցքերին, քաղաքական մանրուքի շրջադարձերին, մոռանալ պրոլետարիատի արմատական շահերը և ամբողջ կապիտալիստական հասարակարգի, ամբողջ կապիտալիստական էվոլյուցիայի հիմնական սծերը, զոհաբերել այդ արմատական շահերը հանուն բոպեի իրական կամ ենթադրական օգուտների,— այս է ռևիզիոնիստական քաղաքականությունը»[1]։

Ժամանակակից ռևիզիոնիզմը հավատարիմ է իր նախորդների այս քաղաքականությանը։ Նա իր վարքագիծը բխեցնում է անցողակի մոմենտներից, կապիտալիստական կարգերի էվոլյուցիայի հիմնական գծերի գիտական վերլուծության փոխարեն ծամծմում է բուրժուական տնտեսագետների դրույթները ժամանակակից կապիտալիզմի մասին, բանվոր դասակարգի արմատական շահերը զոհաբերում է օրվա շահին, իր քաղաքականությունը խարսխում է ոչ թե բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պրակտիկայի, այլ անցողական ու ժամանակավոր հանգամանքների, քաղաքական մանրուքների ու պատրանքների վրա։

Ռևիզիոնիզմը սոփեստական հնարամտություններով ճգնում է ապացուցել, թե ժամանակակից կապիտալիզմն իբր դադարել է կապիտալիզմ լինելուց, և ստեղծվել է մի հասարակարգ, որը գտնվում է կապիտալիզմի ու սոցիալիզմի արանքում։ Գտնվում են անգամ իմաստակներ, որոնք լրջորեն հաշվում են, թե բանի տոկոսով է կապիտալիզմը այս կամ այն երկրում վերածվել սոցիալիզմի։ «Ժողովրդական կապիտալիզմի» առասպելը, որը ռևիզիոնիզմը ժառանգել է բուրժուական իդեոլոգներից, հենվում է այն բանի վրա, որ կապիտալիստա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 30։

կան երկրներում արտադրության որոշ ճյուղեր ազգայնացվում են, արտադրության մեջ բարձրանում է տեխնիկական ինտելիգենցիայի դերը, աճում է պետության դերը, բանվորների մի մասը ձեռք է բերում ակցիաներ և այլն։ Ռևիզիոնիստներին չի հետաքրքրում այն փաստը, որ արտադրության որոշ ճյուղերի ազգայնացումը բխում է հենց բուրժուազիայի շահերից, որ տեխնիկական ինտելիգենցիայի դերի բարձրացումը մազաչափ անգամ չի դիպչում կապիտալիստական սեփականությանը, որ բուրժուական պետության դերը բարձրացմամբ շահագրգռված է ինքը՝ բուրժուազիան, որ, վերջապես, կապիտալիզմի պայմաններում բանվոր դասակարգի մի փոքր մասի տնտեսական դրության բարելավումը կատարվում է միլիոնավոր բանվորական մասսաների աղքատացման աճի պայմաններում, որ ԱՄՆ-ում, օրինակ, բանվորների մի չնչին մասը ձեռք է բերում ակցիաներ, իսկ 6 միլիոնից ավելի բանվորներ գործազուրկ են, որոնք ոչ միայն ակցիաներ, այլև օրվա հացը չեն կարողանում ձեռք բերել։ Ռևիզիոնիստները կառչել են «ամերիկյան բացառիկության» առասպելին և հետ չմնալով ամերիկյան կապիտալիզմի ջատագովներից, պատկերում են ամերիկյան իմպերիալիզմը որպես «ժողովրդական կարգեր», իսկ ամերիկյան բուրժուական դեմոկրատիան որպես «իսկական», «ապադասակարգային» դեմոկրատիա։ Իրականում ամերիկյան կապիտալիզմը տիպիկ մոնոպոլիստական կապիտալիզմ է, որը ուռճանում է, սնվելով ժողովուրդների արյունով ու քրտինքով, իսկ ամերիկյան դեմոկրատիան՝ իմպերիալիստական բուրժուազիայի ներքին ու արտաքին քաղաքականության կենսագործման գործիքն է։ Ռևիզիոնիստները թղթի կույտեր են մրոտում ապացուցելու համար, որ ժամանակակից կապիտալիզմը փոխել է իր բնույթը, հաղթահարել է կապիտալիզմի խոցերը և արմատապես տարբերվում է նախկին կապիտալիզմից։ Իհարկե, կապիտալիզմը մի ինչ-որ քարացած բան չէ, նա անընդհատ փոփոխվում է, սկսած նրա տեխնիկական բազիսից մինչև նրա իդեոլոգիան։ Փոխվում են կապիտալիզմի «հավերժությունն» ապացուցող կոնցեպցիաները։ Փոփոխվում է նաև ռևիզիոնիզմը։ Չի փոխվում ո՛չ կապիտալիզմի և ո՛չ էլ նրա իդեոլոգիայի էությունը. ինչպես էլ կերպարանափոխվի կապիտալիզմը, նա մնում է որպես մի տնտեսակարգ, որը խարսխված է կապիտալիստական մասնավոր սեփականության, բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավոր ժողովրդի շահագործման ու կեղեքման, տնտեսական անարխիայի ու բռնության վրա։ Ինչպես էլ ձևափոխվի բուրժուական իդեոլոգիան, նա մնում է որպես կապիտալիզմի պաշտպանության և ժողովրդական մասսաների հոգևոր ճնշման ու թունավորման գործիք։ Ինչպես էլ կերպարանափոխվի ռևիզիոնիզմը նա մնում է որպես բուրժուական իդեոլոգիայի ազդեցության արտահայտություն բանվորական շարժման մեջ, բուրժուական քաղաքականության կցորդն ու կիրառողը։

Կեղծելով ժամանակակից կապիտալիզմի էությունը, ռևիզիոնիստները կեղծում են նաև ժամանակակից բուրժուական դեմոկրատիայի, պետության ու քաղաքականության էությունը։ Նրանք կաշվից դուրս են գալիս ապացուցելու համար, որ այդ պետությունը դադարել է դասակարգային տիրապետության օրգան լինելուց և դարձել է «ընդհանուր բարօրության» օրգան։ Հարավսլավիայի Կոմունիստների միության ղեկավարության կողմից մշակած ծրագիրը, որը իրականում ժամանակակից ռևիզիոնիզմի ծրագիրն է, այսպես է բնութագրում ժամանակակից բուրժուական պետությունը. «Պետական ապարատը, ձգտելով ձեռք բերել իր ինքնուրույն ֆունկցիան, կանգնում է հասա-

րակությունից վեր և ինչպես մասնավոր կապիտալի դերի, այնպես էլ բանվոր դասակարգի դերի ավելի ու ավելի սահմանափակման տենդենց է երևան բերում»։ Դարեր շարունակ շահագործող դասակարգերի իդեոլոգները կաշվից դուրս են եկել հավատացնելու, թե պետությունը վերդասակարգային մի օրգան է, որը գործում է հօգուտ ամբողջ ժողովրդի, չկանգնելով դասակարգերից և ոչ մեկի կողմը։ Մարքսիզմի մեծագույն ծառայություններից մեկն այն է, որ ջախջախել է պետության վերաբերյալ այդ կեղծիքը և ապացուցել, որ պետությունը դասակարգերի անհաշտելիության արդյունք է և հանդիսանում է տնտեսապես տիրապետող դասակարգի քաղաքական տիրապետության օրգանը։ Հարավսլավիայի Կոմունիստների միության պարագլուխները նորից առաջ են քաշել պետության վերաբերյալ բուրժուական բարբաջանքը և դարձրել ծրագրային դրույթ։

Պեղծելով ժամանակակից կապիտալիզմի և բուրժուական պետության էությունը, ռևիզիոնիստները բնականաբար վերանայում են նաև պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մարքս-լենինյան ուսմունքը։ Նրանք ծամծմում են ոպորտունիստների կողմից վաղուց առաջադրված դրույթը՝ խաղաղ ճանապարհով կապիտալիզմը սոցիալիզմի վերածվելու մասին։ Նախկինում այդ «թեորիան» առաջադրվում էր պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական կարգերի բացակայության պայմաններում, ընդ որում ժխտվում էր ոչ միայն պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը, այլև նրա հնարավորությունը։ Այժմ պրոլետարիատի դիկտատուրայի հնարավորության ժխտումը անմտություն կլիներ, որովհետև նա պատմական փաստ է։ Բայց ռևիզիոնիստներն ունեն պատմական փաստերի գնահատման սեփական եղանակը։ Նրանք ուռճացնելով այն առանձին սխալները, որոնք անցյալում տեղ էին գտել սոցիալիստական երկրներում, առանձնապես անհատի պաշտամունքը, թաղցնում են մասսաներից Սովետական Միության և ժողովրդա-դեմոկրատական երկրների տնտեսական ու քաղաքական վիթխարի նվաճումները, բամբասում ու վատաբանում այն ամենը, ինչ ձեռք է բերել աշխատավոր ժողովուրդը իր հերոսական ջանքերով։ Առանձնապես աչքի են զարնում ռևիզիոնիստների անճոռնի ճիգերը՝ հակադրելու պրոլետարիատի դիկտատուրան դեմոկրատիային։ Փոխառնելով Կաուցկու և նրա տիպի ռենեգատներից այն իդեան, թե իբր պրոլետարիատի դիկտատուրան անհամատեղելի է դեմոկրատիայի հետ, նրանք իմպերիալիստական բուրժուազիայի դիկտատուրան պատկերում են որպես «մաքուր դեմոկրատիայի» մարմնացում, իսկ պրոլետարիատի դիկտատուրան համարում են դեմոկրատիայի ժխտում, անօրինակություն ու մերկ բռնություն։ Մարքսիզմն ապացուցել է, իսկ պատմական փորձն հաստատում է, որ ոչ մի մաքուր դեմոկրատիա չի կարող գոյություն ունենալ։ Բուրժուական դեմոկրատիան, ինչ ձևով էլ նա դրսևորվի, բուրժուազիայի տիրապետության գործիք է։ «Պառլամենտարիզմը,— գրել է Վ. Ի. Լենինը,— չի վերացնում, այլ մերկացնում է ամենադեմոկրատիկ բուրժուական ռեսպուբլիկաների էությունը, իբրև դասակարգային ճնշման օրգանի»[1]։ Պատկերել բուրժուական դեմոկրատիան որպես բուրժուական դիկտատուրայի հաղթահարում, նույնպիսի կեղծիք ու խաբեբայություն է, ինչպիսին բուրժուական վարձու գրչակների շաղակրատությունն է բանվոր դասակարգի և բուրժուազիայի շահերի ներդաշնակության մասին։ Ինչ վերաբերում է պրոլե-

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 15, էջ 28—29։

տարիատի դիկտատուրային, ապա մարքսիզմ-լենինիզմը դրա անհրաժեշտությունը դտնում է այն բանում, որ պրոլետարիատը չի կարող կառուցել սոցիալիստական հասարակարգ առանց վերացնելու շահագործող դասակարգերն ու նրանց քաղաքական տիրապետությունը։ Պրոլետարիատի դիկտատուրան ու դեմոկրատիան չեն բացառում, այլ պայմանավորում են իրար։ Առանց դեմոկրատիայի պրոլետարիատը չի կարող իրականացնել իր քաղաքական տիրապետությունը, ներդրավել ժողովրդական մասսաներին նոր հասարակության կառուցման գործի մեջ։ Առանց դիկտատուրայի նա չի կարող հաստատել ու ապահովել դեմոկրատիան աշխատավոր մեծամասնության համար, վերացնել շահագործող դասակարգերն ու նրանց մնացորդները։ Ռևիզիոնիստները իրենց կույր են ձևացնում և չեն ուզում տեսնել, որ պրոլետարիատի դիկտատուրան իրականացնում է նոր տիպի դեմոկրատիա, դեմոկրատիա ժողովրդի և ոչ թե նրա հարստահարիչների համար։

Ռևիզիոնիստների մոտ լայն տարածում ունի այն հակադիտական դրույթը, թե իբր պրոլետարիատի դիկտատուրան կարող է տեղի ունենալ միայն տնտեսապես հետամնաց երկրներում, իսկ Արևմուտքում, բարձր զարգացած կապիտալիստական երկրներում նրա հաղթանակը անհնարին է։ Նման դրույթով հանդես է գալիս ռևիզիոնիստ Ջոլիտտին Իտալիայում, Գի Կարոնը՝ Կանադայում։ Վերջինս պրոլետարիատի դիկտատուրան համարում է օտարերկրյա և ոչ դեմոկրատական երևույթ։ Նրանց չի վրդովում այն փաստը, որ Մարքսը և Էնգելսը պրոլետարիատի դիկտատուրայի ուսմունքը հիմնադրել են ամենևին էլ ոչ հետամնաց երկրների փորձի հիման վրա, այլ Եվրոպայի տնտեսապես զարգացած երկրների փորձի, այդ երկրներում տեղի ունեցած ռևոլյուցիաների, հատկապես 1848 թ. ռևոլյուցիայի և 1871 թ. Փարիզյան Կոմունայի փորձի հիման վրա։ Իսկ որ իմպերիալիզմի դարաշրջանում պրոլետարիատի դիկտատուրան կարող է հաղթանակել նաև տնտեսապես համեմատարար թույլ զարգացած երկրներում, դա միանդամայն օրինաչափ երևույթ է, որովհետև, ինչպես ապացուցում է պատմության փորձը, միանդամայն հնարավոր է ներքին և արտաքին պայմանների այնպիսի զուգակցում, որ հենց այդ երկրներում պրոլետարիատը ի վիճակի լինի պատռելու իմպերիալիզմի շղթան։ Պրոլետարիատի դիկտատուրայի փորձը անհերքելիորեն ապացուցում է, որ իմպերիալիզմի շղթան հնարավոր է պատռել և տնտեսապես հետամնաց երկրներում, օրինակ՝ Վիետնամում և տնտեսապես բարձր զարգացած երկրում, օրինակ՝ Չեխոսլովակիայում։ Պրոլետարիատի դիկտատուրան իր էությամբ միջազգային երևույթ է, նա հավասարապես պարտադիր է բոլոր երկրներին կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համար։ Մարքսիզմ-լենինիզմը, ընդգծելով պրոլետարիատի դիկտատուրայի անխուսափելիությունը բոլոր երկրներում, միաժամանակ ցույց է տալիս, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելը չի կարող միևնույն ձևով կատարվել տարբեր երկրներում։ Վ. Ի. Լենինը գրել է. «Կապիտալիզմից կոմունիզմին անցնելը, իհարկե, չի կարող չբերել քաղաքական ձևերի ահագին առատություն և բազմազանություն, բայց դրանց բոլորի էությունն անխուսափելիորեն մեկ է լինելու՝ պրոլետարիատի դիկտատուրան»[1]։ Տարբեր են նախ այն ուղիները, որոնց միջոցով պրոլետարիատը կարող է հաստատել իր տիրապետությունը։ Պրոլետարիատի դիկտատուրան կարող է

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 25, էջ 533։

հաստատվել խաղաղ ճանապարհով, այսինքն՝ առանց քաղաքացիական պատերազմի, կարող է հաստատվել և ոչ խաղաղ ճանապարհով։ Դա կախված է ոչ միայն և ոչ այնքան պրոլետարիատից, որքան նրա հակառակորդների դիմադրության բնույթից ու աստիճանից։ Տարբեր են նաև այն կոնկրետ ձևերը, որոնց միջոցով պրոլետարիատը այս կամ այն երկրում կիրականացնի իր դիկտատուրան։ Բայց բոլոր երկրներին հատուկ են ընդհանուր օրինաչափություններ, որոնք արդեն դրսևորված են սոցիալիստական երկրների պրակտիկայում և թեորիապես ընդհանրացվել են կոմունիստական և բանվորական պարտիաների «Դեկլարացիայում»։ Ռևիզիոնիզմը ժխտում է այդ ընդհանուր օրինաչափությունները, առաջին պլանի վրա դնելով տարբեր երկրների առանձնահատկությունները, հակադրելով տնտեսապես զարգացած երկրները տնտեսապես թույլ զարգացած երկրներին, Արևմուտքը Արևելքին և այլն։ Հակադրման նման փորձերը հետապնդում են մի շարք նպատակներ։ Նախ, «ապացուցել», որ պրոլետարիատի դիկտատուրան պատմական օրինաչափություն չէ, այլ բացառիկ երևույթ որոշ երկրների համար։ Երկրորդ, որ այն երկրների փորձը, որտեղ հաստատվել է պրոլետարիատի դիկտատուրա, ոչ մի նշանակություն չունի մյուս երկրների համար, մի գաղափար, որից կառչում են «ազգային կոմունիզմի» փաստաբանները՝ սոցիալիստական երկրների համագործակցությունն ու բարեկամությունը քայքայելու համար։ Վերջապես՝ դա նպատակ ունի հավերժացնելու կապիտալի տիրապետությունը տնտեսապես զարգացած երկրներում և բարոյալքելու այդ երկրների բանվոր դասակարգին, հաշտեցնելու նրան բուրժուական կարգերի «հավիտենական» գոյության հետ։ Մի խոսքով ռևիզիոնիզմը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս հանդես է գալիս որպես պրոլետարիատի դիկտատուրայի թշնամի և դրանով իսկ դավաճանում մարքսիզմին, որովհետև չի կարելի մարքսիստ լինել առանց ընդունելու պրոլետարիատի դիկտատուրան և պայքարելու նրա իրականացման համար։ Սկսելով պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության ժխտումից, ժամանակակից ռևիզիոնիստները վերջացնում են այն բանով, որ պայքարում են նրա դեմ, դրանով իսկ անցնելով պրոլետարիատի թշնամիների շարքը։

Ժխտելով պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը, ժամանակակից ռևիզոնիստները շարունակում են իրենց հեքիաթներն այն մասին, որ «շուտով» խաղաղ ճանապարհով, այսինքն առանց բուրժուազիայի քաղաքական իշխանությունը տապալվելու կապիտալիստական երկրները կանցնեն սոցիալիզմի։ Նման «սոցիալիզմ» արդեն կառուցել են լեյբորիստները Անգլիայում, որտեղ, ըստ լեյբորիստների, վաղուց արդեն հաստատված է «դեմոկրատական սոցիալիզմ»։ Բայց հեքիաթը մնում է որպես հեքիաթ, իսկ Անգլիայում բուրժուազիան ոչ միայն չի հրաժարվում իր տիրապետությունից, այլ ամրացնում է այն։ Ռևիզիոնիստները սոցիալիզմի «տենդենցներ են» գտնում և ԱՄՆ-ում, հարկ չհամարելով հաշիվ տալու, թե ինչու այդ «համարյա թե սոցիալիստական» երկրում բուրժուական պարտիաները անսահման իշխանություն ունեն, իսկ կոմունիստական պարտիան օրենքից դուրս է հայտարարված, թե ինչու կապիտալիստական այդ դրախտում կապիտալիստները ստանում են առասպելական շահույթներ, իսկ պետությունը մշակում և իրականացնում է հակարանվորական դրակոնյան օրենքներ։ Այդ մասին հարկ չեն համարում մտածելու Հարավսլավիայի Կոմունիստների միության ծրագրի կազմողները, որոնք համոզված են և ճգնում են հավատացնել աշխատավորներին, որ կապի-

տալիստական երկրներում, այդ թվում և ԱՄՆ-ում, «որքան ավելի շատ են առանձին տնտեսական ֆունկցիաներ մասնավոր կապիտալից անցնում պետությանը — ընդ որում մասնավոր կապիտալի ֆունկցիաները սահմանափակվում են և ուրիշ ուղիներով,— այնքան ավելի շատ են դրսևորվում նոր, իր օբյեկտիվ տենդենցով սոցիալիստական տարրերի ճնշումը էկոնոմիկայում արտադրության կապիտալիստական եղանակի վրա»։ Ծրագիր կազմողները «մոռացել են» միայն նշելու, որ իմպերիալիստական երկրների էկոնոմիկայում «սոցիալիստական» տարրերի այդ կարծեցյալ աճումը զուգակցվում է գործազրկության ահռելի աճումով, ֆերմերների քայքայմամբ և կապիտալի հետագա կուտակմամբ մոնոպոլիստական մագնատների ձեռքում։

Ռևիզիոնիստները գտնում են, որ դասակարգային պայքարի իբր թե աստիճանական մաքումը կապիտալիստական երկրներում պայմաններ է ստեղծում սոցիալիզմին հասնելու համար։ Այս և նման հեքիաթները այն մասին, թե իմպերիալիզմի պայմաններում սոցիալիզմի «տարրերն» աճում են բուն կապիտալիստական էկոնոմիկայում, հետևաբար, սոցիալիզմը ոչ թե դասակարգային պայքարի, այլ նրա մարման հետևանք է լինելու, ուղղված են սոցիալիզմի կառուցման պրակտիկայի դեմ Սովետական Միությունում և ժողովրդա-դեմոկրատական երկրներում և նպատակ ունի միջազգային բանվորական շարժումը շեղել այն ուղուց, որը ցույց է տրված ռևոլյուցիայի պայքարի պրակտիկայով և թեորիապես հիմնավորված է մարքսիզմ-լենինիզմի կողմից։ Սոցիալիզմին անցնելը, ինչ ձևով էլ նա իրագործվի, խաղաղ թե ոչ խաղաղ, հնարավոր է միայն դասակարգային պայքարի զարգացման, հասարակության ռևոլյուցիոն վերափոխման միջոցով։ Նշելով, որ ժամանակակից պայմաններում մի շարք կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգը հնարավորություն ունի նվաճելու պետական իշխանությունն առանց քաղաքացիական պատերազմի և դրանով ստեղծելու անհրաժեշտ պայմաններ խաղաղ ճանապարհով սոցիալիստական ռևոլյուցիան կենսագործելու համար, սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների Դեկլարացիան միաժամանակ ընդգծում է, որ «Այս ամենը հնարավոր կլինի մոնոպոլիստական խոշոր կապիտալի դեմ, ռեակցիայի դեմ, սոցիալական խոր ռեֆորմների համար, խաղաղության ու սոցիալիզմի համար բանվորների, գյուղացիական զանգվածների և քաղաքային միջին խավերի դասակարգային պայքարի լայն, անընդհատ զարգացման ճանապարհով միայն»։

Դասակարգային պայքարի անընդհատ զարգացման և սոցիալիզմի հաղթանակի ապահովման պայմաններից մեկն էլ ռևիզիոնիզմի մերկացումն ու անողոք ջախջախումն է, որովհետև նա ուղղված է բանվոր դասակարգի ռևոլյուցիոն շարժման ու սոցիալիզմի կառուցման դեմ։ Քողարկվելով մարքսիզմի դիմակով և բարբաջելով մարքսիզմի հետագա «զարգացման» մասին, ժամանակակից ռևիզիոնիզմը իրականում ճգնում է մեռցնել մարքսիզմի ռևոլյուցիոն ոգին և հարմարեցնել կոմունիզմի վեհ իդեաները իմպերիալիստական կապիտալի շահերին։ Իզուր չէ, որ ամերիկյան իմպերիալիզմի քաղաքականության մշակողներից ու կիրառողներից մեկը՝ Դալլեսը համակրանքով է խոսում Տիտոյի «կոմունիզմի» մասին։

Ժամանակակից ռևիզիոնիզմը հանդես է գալիս սոցիալիզմի համաշխարհային սիստեմի քննադատի դերում։ Այդ բանում առանձնապես ջանում է Տիտոյի խմբակը։ Հարավսլավիայի ռևիզիոնիստները ժիտում են այն օբյեկ-

տիվ, պատմականորեն ստեղծված ռեալ իրողությունը, որ աշխարհը բաժանված է երկու հակադիր՝ կապիտալիստական և սոցիալիստական լագերների և որ՝ հիմնական հակասությունը դրանց մեջ է։ Նրանք սիրում են շաղակրատել «սոցիալիստական աշխարհի» մասին, նկատի ունենալով ոչ թե սոցիալիստական երկրները Սովետական Միության գլխավորությամբ, այլ սոցիալիստական «տարրերի» առկայությունը ամբողջ աշխարհում, այդ թվում և իմպերիալիզմի էկոնոմիկայի մեջ։ Հավասարության նշան դնելով տարբեր սոցիալական սիստեմների և ռազմաքաղաքական բլոկների միջև, նրանք հավասարության նշան են դնում նաև սոցիալիստական և իմպերիալիստական երկրների քաղաքականության միջև, ընդ որում հարվածի տակ առնելով Սովետական Միության քաղաքականությունը։ Հարավսլավիայի ռևիզիոնիստների պարագլուխ Տիտոն ժամանակակից միջազգային լարվածության, ԱՄՆ-ի իմպերիալիստական ուժի դիրքերից սարվող քաղաքականության պատճառը գտնում է այն բանում, որ Սովետական Միությունն իր կոշտ քաղաքականությամբ դիմադրում է նրան և ստիպում ընտրելու նման կուրս։ Տիտոյի և նրա համախոհների համար գոյություն չունի պատմական այն փաստը, որ բաժանելով ու վերաբաժանելով աշխարհը, բուրժուազիան «ուժի դիրքերից» քաղաքականությունը վարում էր ավելի վաղ, քան գոյություն ունեին Սովետական Միությունն ու սոցիալիստական լագերը։ Նրանց համար գոյություն չունի և այն փաստը, որ Սովետական Միության արտաքին քաղաքականության սկզբունքը եղել և մնում է խաղաղությունը և որ այդ քաղաքականությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում իմպերիալիստների համար իրենց արյունոտ պլաններն իրականացնելու գործում։ Ռևիզիոնիստները ըստ էության խորհուրդ են տալիս սոցիալիստական երկրներին՝ վարել կապիտուլյանտական քաղաքականություն, որպեսզի իմպերիալիստները հրաժարվեն ուժի քաղաքականությունից։ Բայց այդ կնշանակեր հրաժարվել սոցիալիստական սիստեմից, որովհետև իմպերիալիստները չեն թաքցնում, որ իրենց քաղաքականությունն ուղղված է սոցիալիստական սիստեմի դեմ։

Ռևիզիոնիստները վատաբանում են Սովետական Միության եղբայրական անշահախնդիր օգնությունը մյուս սոցիալիստական երկրներին, զրպարտում են հաղթանակած սոցիալիզմի երկրի ու նրա Կոմունիստական պարտիայի պատմական դերը։ Հարավսլավիայի ռևիզիոնիստները բարբաջում են անգամ Սովետական Միության կողմից ինչ որ «տնտեսական շահագործման» մասին, իսկ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ավանգարդային դերը պատկերում որպես «հեգեմոնիզմ»։ Իրենց ձևացնելով ինտերնացիոնալիստներ, նրանք փաստորեն ջանում են քայքայել պրոլետարիատի միջազգային համերաշխությունը, սոցիալիստական երկրների եղբայրական բարեկամությունը, համագործակցությունն ու փոխադարձ օգնությունը։

Ժամանակակից ռևիզիոնիզմը իր պայքարի սուր ծայրն ուղղել է կոմունիստական պարտիաների, նրանց իդեոլոգիական, կազմակերպական ու տակտիկական սկզբունքների դեմ։ Նրանք իրենց նախորդների նման, պահանջում են ունենալ ոչ թե սոցիալիստական ռևոլյուցիայի, այլ սոցիալական ռեֆորմների պարտիա, որը իր շարքերում հանդուրժեր ամենատարբեր քաղաքական հայացքներ ունեցող մարդկանց և հրաժարվելով դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքից՝ ազատություն տար ամեն տեսակի ֆրակցիաներին։ Ռևիզիոնիստներին հրապուրում են աջ սոցիալիստական պարտիաները, և նրանք

պահանջում են նմանվել նրանց՝ և՛ կազմակերպական սկզբունքներով, և՛ քաղաքական նպատակներով։ Ելնելով դասակարգային պայքարի մարման տխրահռչակ «թեորիայից», նրանք գտնում են, որ ժամանակակից պայմաններում ռևոլյուցիոն պարտիայի անհրաժեշտությունն վերացել է։ Հրաժարվելով դասակարգային պայքարից, կամ վերականգնելով լիբերալ այն հայացքը, ըստ որի դասակարգային պայքարի ամբողջ էությունը քաղաքական ողորմածություններ ձեռք բերելուն է հանգում, ռևիզիոնիստները ձևացնում են, թե դադարել է ինքը դասակարգային պայքարը, կամ նա պտտվում է միայն օրվա օգուտի շուրջը։ Հարավսլավական ռևիզիոնիստները ի վիճակի չեն հանգիստ նայելու կոմունիստական պարտիաների իդեոլոգիայի ընդհանրության և գործունեության միասնության վրա։ Զրպարտելով կոմունիստական պարտիաներին, ամենից առաջ Սովետական Միության Կոմունիստական պարտիային, հերյուրում են պիտակներ նրանց հասցեին, նրանց միասնությունը որակելով որպես «իդեոլոգիական մոնոպոլիզմ», «քաղաքական հեգեմոնիզմ» և այլն։ «Այն դրությը – ազդարարում է Տիտոյի խմբակը,— որ կոմունիստական պարտիաները մենաշնորհ ունեն սոցիալիզմ տանող ամեն տեսակ շարժման նկատմամբ և որ սոցիալիզմն արտահայտվում է միայն նրանց մեջ և նրանց միջոցով, թեորետիկորեն ճիշտ չէ և պրակտիկորեն միանգամայն վնասակար է»։ Հայտնի է, որ սոցիալիզմի կառուցման գործը պրոլետարիատի և ամբողջ աշխատավոր ժողովրդի գործն է, որը ղեկավարվում է Կոմունիստական պարտիայի կողմից։ Ռևիզիոնիստները խոսելով այն մասին, որ կոմունիստական պարտիաները «մենաշնորհ» ունեն սոցիալիստական շարժման մեջ, ջանում են ժողովուրդն ու պարտիան հակադրել իրար, անտեսել այն, որ պարտիայի ուժը ոչ թե ինչ որ «մենաշնորհի» մեջ է, այլ այն բանում, որ նա արտահայտում է աշխատավոր ժողովրդի կենսական շահերը, որ նա իրեն չի բաժանում ժողովրդից, այլ գնում է նրա հետ, ղեկավարում նրա պայքարը։

Կոմունիստական պարտիաները ծնվել և կոփվել են բանվորական շարժման մեջ, դարձել նրա պայքարի առաջնորդն ու ղեկավարը, նրա դասակարգային կազմակերպվածության մարմնացումը։ Ռևիզիոնիստները ճգնում են հետ տանել բանվորական շարժումը դեպի նրա նախնական ձևերը, դեպի տարեբայնությունն ու տարընթացությունը, քայքայել դասակարգային կազմակերպվածության այն մեծագույն գենքը, որ պրոլետարիատը ձեռք է բերել դժվար մարտերում ու մեծ զոհաբերությունների գնով։ Նրանք ճգնում են կոմունիստական շարժման մեջ անվստահություն սահմանել դեպի մարքսիզմ-լենինիզմի հաղթակիր ուսմունքը, շաղակրատելով նրա «հնացման» մասին կամ նրա «զարգացման» քողի տակ վերանայել նրա կենդանի ոգին։ Ռևիզիոնիստները չեն ուզում հասկանալ, որ մարքսիզմ-լենինիզմը կենդանի կյանքի գիտական արտացոլումն է, և նա չի կարող հնանալ, ինչպես չի հնանում հասարակության առաջընթացը։ Նրանք չեն ուզում տեսնել, որ մարքսիզմ-լենինիզմը ստեղծագործորեն զարգացվում է կոմունիստական պարտիաների կողմից, որոնք ղեկավարելով ժողովուրդների ազատագրական շարժումը, դեմոկրատիայի ու սոցիալիզմի համար մղվող պայքարը, հարստացնում են մարքսիզմ-լենինիզմը ռևոլյուցիոն պրակտիկայի հիման վրա։ Ավելին, նրանք բամբասում են կոմունիստական պարտիաներին, մեղադրում նրանց «դոգմատիզմի» մեջ, բամբասում միջազգային բանվորական շարժումը, որը իբր հետ է մնում ռեալ կյանքից։ «Միջազգային բանվորական շարժման զարգացումը,— հայտարարում են

Հարավսլավիայի ռևիզիոնիստները,—վերջին տասնամյակների ընթացքում համապայլ չէր գնում հասարակական դեպքերի ու նյութական պայմանների զարգացման հետ»։ Վերջին տասնամյակների ընթացքում բանվորական շարժումը պատմության մեջ գրել է այնպիսի փառապանծ էջեր, որ մարդկությունը մեծ երախտագիտությամբ կհիշատակի և հազարամյակներ հետո։ Վերջին տասնամյակների ընթացքում ֆեոդալիզմի, կապիտալիզմի ու իմպերիալիստական կեղեքման լուծը թոթափել են չին մեծ ժողովուրդը և տասնյակ այլ ժողովուրդներ Եվրոպայում ու Ասիայում։ Վերջին տասնամյակների ընթացքում փլվել և փլվում է գաղութարարական ամոթարար սիստեմը, և այդ գործում ամենից առաջ պետք է նշել բանվորական շարժման դերը։ Բայց այդ բոլորը ռևիզիոնիստների համար գոյություն չունեն։ Նրանք երկրպագում են զառամյալ կապիտալիզմին, տեսնելով նրա մեջ երիտասարդական ավյուն և սոցիալիզմի աճող «տարրեր»։ Նրանք պարմանալի սրատես ու բծախնդիր են, երբ թերություններ են փնտրում սոցիալիստական երկրներում, բայց նրանք օրը ցերեկով կուրանում են, երբ հարկ է լինում տեսնելու այն պատմական նվաճումները, որ ձեռք են բերել այդ երկրները։ Բայց ժամանակակից ռևիզիոնիզմին դժվար է թաքցնել իր սեփական դեմքը։ Պատմության զարգացումը, կապիտալիստական կարգերի հետագա նեխումն ու սոցիալիզմի հաղթական առաջընթացը հիմքից խարխլում է ռևիզիոնիստական թեորիան ու պրակտիկան։

Ռևիզիոնիզմը ժամանակակից պայմաններում հիմնական վտանգն է բանվորական շարժման մեջ։ Նա ապակողմնորոշում է բանվոր դասակարգին, ջլատում է նրա ռևոլյուցիոն եռանդն ու մթագնում նրա դասակարգային գիտակցությունը։ Բայց նրա ճիգերն ապարդյուն են։ Նա հանդես է եկել պատմական մի ժամանակաշրջանում, երբ մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներն ստուգվել ու իրենց կենդանի մարմանցումն են գտել ռևոլյուցիոն պայքարի, ժողովուրդների ստեղծարար գործունեության մեջ։ Կոմունիստական ու բանվորական պարտիաները ամբողջ աշխարհում դատապարտում ու մերկացնում են ռևիզիոնիզմը, Հարավսլավիայի Կոմունիստների միության ծրագիրը, որտեղ ժամանակակից ռևիզիոնիզմը գտել է իր լիակատար ու խտացված արտահայտությունը։ Կոմունիստական շարժումը մաքրում է իր շարքերը ռևիզիոնիստական թափթփուկներից ու սողոսկումներից, և նրա շարքերից դուրս նետված ռևիզիոնիստները, բացահայտորեն անցնելով բուրժուազիայի լագերը, ավելի են մերկացնում իրենց, ցույց տալով, որ մարքսիզմի անունը նրանք երկար ժամանակ օգտագործել են միայն իրենց իսկական դեմքը թաքցնելու համար։ Բուրժուազիան մեծ հույսեր է դնում ռևիզիոնիզմի վրա, նրա իդեոլոգները վազորոք հրճվում են «կոմունիզմի ճգնաժամի» առթիվ։ Բայց վաղաժամ է նրանց հրճվանքը։ Կոմունիզմի դրոշը գտնվում է ամուր ձեռքերում, միջազգային կոմունիստական շարժումը ավելի, քան երբևէ, միասնական է ու հզոր և նա զարգանում է օրավուր, մաքրելով իր ճանապարհը ռևիզիոնիզմից ու ամեն տեսակի աղտեղություններից, որ սնուցվում է կործանման դատապարտված հասարակարգի կողմից։